

Մայր Աթոռ Ս. Էջմիածին  
Տեղեկատվական Համակարգ  
Հեռ.: (374 1) 517 128/125  
Հեռատիպ: (374 1) 517 125  
Էլ-փոստ: [holysee@etchmiadzin.am](mailto:holysee@etchmiadzin.am)  
Տնօրեն՝ Տ. Վահրամ քհն. Մելիքյան

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ  
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 90-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԵՎԻՐՎԱԾ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

*(Երևան, 20 ապրիլի, 2005 թ.)*

Մեծարգո Նախագահ Հայաստանի Հանրապետության,  
Համաժողովի պատվարժան մասնակիցներ և հյուրեր:  
Ողջունում ենք Ձեզ Հայոց Ցեղասպանության 90-ամյա տարելիցին նվիրված միջազգային այս համաժողովի առիթով և բերում օրհնություն համայն հայոց հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից:

Մեր ժողովրդի համար այսօր մեծ մխիթարություն է, որ տասնամյակներ անց միջազգային հանրության ուշադրության կենտրոնում է 20-րդ դարասկզբին Օսմանյան թուրքիայում իրականացված հայկական Ցեղասպանությունը, որը բազմաթիվ փորձություններ տեսած մեր ժողովրդի պատմության ամենաողբերգական էջն է:

Քաղաքակրթության առաջընթացի, լուսավորության դարում մեր ժողովուրդը հույս ուներ գտնել անձի ապահովություն, մարդկային իրավունքի պաշտպանություն և խաղաղ ու ստեղծագործ կյանքի պայմաններ, բայց բնաջնջվեց թուրքիայի տարածքում գտնվող իր պատմական Հայրենիքի մեծագույն հատվածի վրա և թուրքական կայսրության հայաշատ բնակավայրերում: Կազմակերպված կոտորածներն ու տարագրությունը վերածվեցին մահվան նախճիրի. ինչ էլի հասցնում սուրը, ավարտում էին սովն ու համաճարակները: Փաստական վկայությունների պակաս չեն զգում այս իրադարձությունների ուսումնասիրությունները: Այսօր մի շարք պետությունների կողմից Հայոց Ցեղասպանության ճանաչումն ու դատապարտումը՝ իբրև մարդկության դեմ գործված մեծագույն ոճիր, վստահություն է ներշնչում Մեզ, որ այն պիտի գտնի համընդհանուր ճանաչում ու արդար գնահատական:

Հայ ժողովրդի համար Ցեղասպանության մեծագույն աղետով սկսված 20-րդ դարը մարդկության պատմության մեջ մնաց իբրև երկու համաշխարհային պատերազմների դար: Նույն այն մտածողությամբ, որով կազմակերպվեցին սոսկալի, վայրագ ջարդերը հայերի, ծնունդ առան համակենտրոնացման ճամբարներն ու գազախցիկները: Նոր դար է սկսվում և պիտի սկսվի նոր մտածողությամբ՝ բռնությունն ու ոճիրը մերժող և մարդասիրական արժեքները հաստատող: Դար, որի մեջ, ինչպես սաղմոսերգուն է ցանկանալով ցանկանում՝ ողորմությունն ու ճշմարտությունը հանդիպեն և արդարությունն ու խաղաղությունը համբուրվեն: Մենք՝ մարդիկ, պիտի կերտենք այդ դարը: Պատմությունը վկայում է, որ ավերներից սովորաբար ավելի հեշտ վերականգնվում են քաղաքները, բարեփոխվում են կյանքի պայմանները, քան փոխվում են մարդկանց հոգեբանությունն ու մտածողությունը, կյանքի բարոյական չափորոշիչները, որոնք և են իրական երաշխիքները առաջընթացի և հույսը՝ գալիքի: Թուրքիայի համար նույնպես Հայոց Ցեղասպանության ճանաչումը պիտի դառնար մարդկային

իրավանց և ժողովրդավարության իրական նվաճում, առանց որի, Թուրքիան պիտի դժվարանա կառուցել ազատ, արժանապատիվ ու երջանիկ կյանք:

Սիրելիներ, բոլոր ժամանակների գերագույն ձգտումն ու նպատակը, գերագույն ջանքը պիտի լինի, որպեսզի հաղթանակող մնան մարդասիրությունը, իրավունքն ու արդարությունը՝ ընդդեմ ատելության ու թշնամության, ահաբեկչության ու պատերազմի և այլ չարիքների, որոնք տեղ ունեն արդի մեր իրականության մեջ, դարի մարտահրավերներն են մարդկության առջև ծառայած:

Միջազգային ներկայացուցչական այս համաժողովը նույնպես կոչված է մեր ժամանակի մարտահրավերներին անդրադառնալու: Հայոց Տեղասպանության 90-ամյակի հիշատակումը սոսկ առիթ չէ, այլ նաև՝ հրամայական՝ այս առումով: Մեր մաղթանքն է, որ համաժողովը իր նպաստը բերի ավելի լավ, ավելի բարեգործ աշխարհ ունենալու մարդկության հույսերի ու ձգտումների մարմնավորման գործընթացներում:

Մեր գնահատանքն ենք բերում հավաքի կազմակերպիչներին և Ձեզ բոլորիդ և ամենայն հաջողություններ մաղթում համաժողովի աշխատանքներին:

Թող Տերը օրհնի մեզ և օրհնի խաղաղության ու արդարության ու ազգերի միջև եղբայրության ճանապարհները:

Աղոթք և օրհնություն մեկ ու կես միլիոն անմեղ զոհերի հիշատակին:

Աստծո ողորմությունը, շնորհն ու սերը թող լինի աշխարհի և մեզ հետ: Ամեն:

###